

եւ վերջերն Հրեայք ալ (Ամովս, 9, 4. Փիլ. ճոր. 25-6). Ինչպէս եւ Բիւզանդացիք, որոցմէ Յիսուս եւ առաքեալք իսկ նոյն զիրքով կը նկարուին 9-ի դարերուն (Կարր. Բ, 3045-7): Բայց հնագոյն ժամանակներն ուղիղ կը նստէին Յոյները (Գար. Ա, 1271), Հրեայք (Ծննդ. Ի, 19. Ա. Թագ. Ի, 5), եւ Հռովմայ գետնադամբանաց մէջ նկարուած քրիստոնեայ կոչնականք եւս (Մարտ. 700):

Մեր քով առաջին ձեւին յիշատակութեան կը հանդիպինք մէկ անգամ, Տերենտի ընթրեաց առթիւ, ուր Պապ հետեւելով իւր բիւզանդացի կոչնատիրոջ ու սեղանակցաց օրինակին, ձախ կողմին վրայ կըսած ու նոյն արմկին յեցած էր. «ահեակ ձեռամբն յարմուկն յոր յեցեալ բազմեալ էր», եւ նոյն ձեռքով ու զիրքով բաժակն ալ բռնած. իսկ աջ ձեռն ազատ՝ դրած էր նրանի դաստապանին՝ զոր կապած ունէր աջ ազդրին վրայ (Փաւս. 233): Բուն այս էր արեւմտեան նիստը:

Սակայն տոհմային բնիկ կերպն ուղիղ նիստը կը կարծեմ, զոր մեր անջատ բազմականք եւ նեղ ու փոքր բարձերն իսկ կը պահանջէին, հակառակ Բիւզանդացւոց եւ այլոց լայն ու միապաղաղ անկողնոց (աստ, 52-6): Արդարեւ մեր բոլոր պատ-